ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
16.01.2024թ. թիվ 1/18-Լ որոշման

Պալատի խորհրդի նախագահ՝

_____ Սիմոն Բաբայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Փաստաբանության մասին» օրենքի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի **կանոնադրության** համաձայն՝ ***փաստաբանների պալատի խորհուրդը (այսուհետ, նաև՝ Խորհուրդ) փաստաբանների պալատի գործադիր, ինչպես նաև կարգապահական վարույթի շրջանակներում ընդունված որոշումները վերանայող մարմինն է:***

Փաստաբանների պալատի խորհուրդն ունի **տասներկու անդամ**՝ չհաշված խորհրդի նախագահը: Խորհրդի անդամները (բացառությամբ խորհրդի նախագահի) վարկանիշային կարգով ընտրվում են փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից չորս տարի պաշտոնավարման ժամկետով:

ՀՀ փաստաբանների պալատի **նախագահն** ի պաշտոնե Խորհրդի նախագահն է:

№	Վիճակագրական տվյալի չափանիշը	Վիճակագրական տվյալը
1	Խորհրդի ընթացիկ նիստերի քանակը	**28**
2	Խորհրդի կարգապահական գործերով կայացած նիստերի քանակը	**86**
3	Խորհրդի բողոքարկման վարույթների քանակը	**8 (7 մերժում և 1 բավարարում)**
4	Խորհրդի հայտարարությունների քանակը	2

ԽՈՐՀՐԴԻ ԸՆԹԱՑԻԿ ՆԻՍՏԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Խորհուրդը 2023թ. անցկացրել է ընդհանուր **28** ընթացիկ նիստ, որոնցից՝ **2**-ն առկա ձևաչափով, **26**-ը համակցված՝ առկա և հեռավար եղանակներով: Նիստերի արդյունքում կայացրել է **336** որոշում:*

№	Վիճակագրական տվյալի չափանիշը	Վիճակագրական տվյալը
1	փաստաբանական գործունեության արտոնագիր տալու հարց	11
2	փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցնելու հարց	137
3	փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը վերականգնելու հար	67
4	փաստաբանական գործունեության արտոնագրի գործունեությունը դադարեցնելու հարց	9
5	այլ երկրի փաստաբանին մեկ տարի ժամկետով ՀՀ տարածքում փաստաբանական գործունեություն իրականացնելու հավատարմագիր տրամադրելու հարց	22
6	անդամավճարի արտոնության հարց	4
7	անդամավճարի տարաժամկետ վճարման ժամանակացույց սահմանելու հարց	10
8	հաշվետվությունները հաստատելու հարց	5
9	փաստաբանի օգնականի արտոնագիր տրամադրելու հարց	16
10	Փաստաբանի օգնականի արտոնագրի գործողության ժամկետը երկարաձգելու հարց	4
11	ՀՀ փաստաբանների պալատի անունից խոշոր գործարք կնքելու համաձայնություն (թույլտվություն) տալու հարց	4

12	Կարգեր հաստատելու և փոփոխություններ կատարելու հարցեր	17
13	Ծրագրեր հաստատելու հարցեր (բյուջե, հաստիքացուցակ)	5
14	դիմում և բողոք քննարկելու մասին հարցեր	8
15	Այլ	17

ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՔՆՆՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2023 թվականին Խորհուրդը քննել և դրանց արդյունքներով կայացրել է 64 որոշում, որոնք հարուցված են եղել 2022 թվականին:

Խորհուրդը 2023թ. անցկացրել է կարգապահական գործերով ընդհանուր 86 նիստ, որոնցից՝ 86 նիստն անցկացվել են համակցված հեռավար և առկա ձևաչափով:

Մինչև փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի ձևավորումը՝ 2022 թվականին հարուցված կարգապահական վարույթները իրականացվել են մինչև ***««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի հոկտեմբերի 5-ի ՀՕ-366-Ն*** օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգով:

2023 թվականի ընթացքում փաստաբանների պալատի խորհրդի կողմից քննված և ավարտված գործերի վիճակագրություն

1	Ավարտված կարգապահական վարույթները, այդ թվում՝	64
1.1	կարճված	12
1.2	պատասխանատվության ենթարկված	52

2	Կարճված վարույթները ըստ հիմքերի, այդ թվում՝	12
2.1	կարճված անդամավճարների հիմքով հարուցվածներից	3
2.2	կարճված փաստաբանների բողոքների հիման վրա հարուցվածներից	1

2.3	կարճված վստահորդների բողոքների հիման վրա հարուցվածներից	6
2.4	հակառակորդ կողմի բողոքի հիմքով հարուցվածներից	0
2.5	կարճված այլ հիմքերով հարուցվածներից (ՀԼՄ, քննչական մարմին)	2

3	**Պատասխանատվության ենթարկվածներ**	**52**
3.1	անդամավճարների հիմքով հարուցվածներից	43
3.2	փաստաբանների բողոքների հիման վրա հարուցվածներից	1
3.3	վստահորդների բողոքների հիման վրա հարուցվածներից	7
3.4	հակառակորդ կողմի բողոքի հիմքով հարուցվածներից	0
3.5	այլ հիմքերով հարուցվածներից (ՀԼՄ, քննչական մարմին)	1

ՔՆՆՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԸ՝ 64				
Կարճված վարույթներ՝ 12 (19%) ադ թվում՝			***Կարգապահական փույժով ավարտված վարույթներ՝ 52 (81%) այդ թվում՝***	
Բողոքի հիմքով հարուցված և քննված կարգապահական վարույթների քանակը՝ 18, որից *				
Բողոքի հիմքով հարուցված վարույթի կարճում	9 50%		***Բողոքի հիմքով հարուցված վարույթով փույժի որոշում***	9 50%
Անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված և քննված կարգապահական վարույթների քանակը՝ 46, որից				
Անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված վարույթի կարճում	3 6.5%		***Անդամավճարը չվճարելու հիմքով փույժի որոշում***	43 93.5%